ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆԱՑՄԱՆ 30-ԱՄՅԱԿԸ ՍՈՖԻԱՅԻ ՄԵՋ

26 նոյեմբեր կիրակի առավոտ, հայ ժողովուրդի պատմության ամենալուսավոր թվականի — 1920 նոյեմբեր 29 — Հայաստանի սովետականացման 30-ամյակի առթիվ «Երևան»ի Սոֆիայի մասնաճյուղի և Բուլղար և Սովետական Միության վարչություններու նախաձեռնությամբ տեղի ունեցավ աննախընթաց շուքով հանդիսավոր ժողով՝ կինո «Մոսկվա»յի սրահին մեջ։ Երբ վարագույրը բացվեցավ, գործոն նախագահության աթոռներու վրա կերևային Սովետական դեսպանատան ներկայացուցիչ Օլեկ Կլեստով, Բուլղար և Սովետական Միության ներկայացուցիչներ՝ Նենով և Սեմերջիև, հույն քաղաքական էմիկրանտներու ներկայացուցիչը, «Երևան» հառաջդիմական միության կեդրոնական վարչության անդամներ, Հայ պետական «Սպանդարյան» վարժարանի տնօրեն ընկեր Նասև, տեղական մասնաճյուղի վարչության անդամներ, հարվածայիններ, «Երևան»ի Սոֆիայի մասնաճյուղի ենթաբաժիններու ներկայացուցիչներ և արվեստագետներ։ Բեմը զարդարված էր դրոշակներով և առաջնորդներու նկարներով, որոնց ներքև «30 տարի Սովետական Հայաստան» լոզունգով և թաղարներով։

Նոյեմբեր 29-ի նշանակության և հայ ժողովուրդի անցած արյունոտ ուղիեն մինչև այսօրվա երջանիկ ներկայի զեկույցով հանդես եկավ «Երևան»ի կեդրոնական վարչության նախագահ Մ. Խաչիկյան։ Անոր կուռ զեկույցը խանդավառ ծափերով հաճախ ընդմիջվեցավ ժողովականներեն։ Ողջույնի խոսք ըսին Բուլղար և Սովետական միության ներկայացուցիչ Հարալամբի Նենով և Հայ պետական «Սպանդարյան» վարժարանի տնօրեն Նասև— ուսուցչական կազմի անունով։ «Սպանդարյան» վարժարանի սեպտեմբերիկներու խմբակ մը հանդիսավոր կերպով խոստումի-ողջույնի ուղերձ ընելով ծաղկեփունջ մը նվիրեց Սովետական դեսպանատան ներկայացուցիչին։ Ի վերջո, ողջույնի հեռագիրներ ուղղվեցան Ի. Վ. Ստալինի, Բուլղար Կոմունիստական Կուսակցության ընդհանուր քարտուղար և Մինիստրներու նախագահ Վլկո Չերվենկովի, Սովետական Հայաստանի կառավարության և Հայաստանյան ճակատի Ազգային խորհուրդին, որոնք միակամ խանդավառությամբ և երկար խլացուցիչ ծափերով ընդունվեցան ներկաներեն։

Հանդեսը շարունակվեցավ գրական ու գեղարվեստական բաժինով։

Ներկա եղող հոծ բազմությունը հանդիսավոր ժողովեն վերջ այցելեց բուլղար ժողովուրդի մեծագույն զավակ Գեորգի Դիմիտրովի դամբարանը և ծաղկեպսակ զետեղելով, պահ մը լուռ ծունկի գալով հարգեց իր կյանքով օրինակելի, իր մահվամբ անմահ, ընկեր և պաշտպան բանվոր դասակարգի և հախուռն գործիչի՝ Գեորգի Դիմիտրովի հիշատակը։

Ժողովի պաշտոնական բաժինը «Բլկարսկո տելո» շարժանկարի կողմե նկարվեցավ։

Երեկոյան Ալիանս Ֆրանսեզի սրահներուն մեջ տեղի ունեցավ «Երևան»ի վարչության կողմե սարքված երեկույթը, ուր սոֆիահայությունը ցնծությամբ տոնեց Հայրենիքի ազատագրման լուսավոր թվականը՝ նոյեմբեր 29-ը։

Չորեքշաբթի, 29 նոյեմբեր, կեսօրե առաջ Հայ պետական «Սպանդարյան» վարժարանի Ծնողական կոմիտեի և ուսուցչական կազմի կողմե ևս Հայաստանի սովետականացման 30-րդ տարեդարձը նշվեցավ հանդիսավոր տոնակատարությամբ, կինո Սլավեյկովի սրահին մեջ։ Ծնողական խորհուրդի նախագահ Հ. Նալչաջյանի բացման խոսքեն վերջ զեկուցանեց Վ. Մումճյան, որմե վերջ վարժարանի աշակերտության կողմե կատարվեցան օրվա պատշաճ խմբերգներ, արտասանություններ, մեներգներ։ Ցուցադրվեցավ «Հայրենի Երկիր» ֆիլմը։ Ծնողներ, աշակերտություն՝ հայրենապաշտ սոֆիահայությունը հայրենի կարոտի տենչով այս անգամ ալ ծայրեծայր լեցուցած էր սրահը։

30 նոյեմբեր երեկոյան ժամը 8—8,30 Սոֆիայի ռադիոկայանը ունեցավ հայկական ժամ, նվիրված Սովետական Հայաստանի 30-րդ տարելիցին։ Միկրոֆոնի առաջ ճառ խոսեցավ «Երևան»ի կեդրոնական վարչության նախագահ Մ. Խաչիկյան, երգեց «Երևան»ի երգչախումբը, արտասանեց Օ. Քեչյան՝ Նաիրի Զարյանի «Ուղերձ իմ ժողովուրդին»են հատված մը, նվագեցին դաշնակով Ա. Բերբերյան, ջութակով՝ Ա. Մեծիկյան, մեներգեց Ս. Մանուկյան

(«Երևան», 8 հոկտեմբերի 1950 թ.)